

Արսեն Է. Հարությունյան
Պատմ. գիյր. թեկնածու

17-18-ՐԴ ԴԴ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՐՄԵՐԻՆ ԱԳՈՒՅՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Հորինվածքը, գործառույթը, հիշատակագրությունը*

Բանալի բառեր – խաչքար, հիշատակագրություն, եկեղեցի, հորինվածք, վարդյակ, արևելք, լուսամուտ, բեմառէջք, մեկենաս:

Մուտք

Միջնադարյան Հայաստանի մշակույթի մի ուրույն տեսակ է խաչքարային արվեստը: Այն ձևավորվել է դեռևս վաղ միջնադարում, ապա ձեռք բերելով զարգացման որոշակի դինամիկա՝ կատարելագործվել ու հասել է մինչև մեր օրերը: Խաչքարերի ծագման ու զարգացման, հորինվածքային, ծավալատարածական, գործառնական ու իմաստաբանական նշանակության հետ կապված հարցերը մշտապես եղել են մասնագետների ուշադրության կենտրոնում. դրանց նվիրվել են առանձին հոդվածներ, պատկերագրքեր ու մենագրություններ¹: Այս ոլորտում հատկանշելի է հնագետ Համլետ Պետրոսյանի մեծածավալ ու հիմնարար աշխատությունը², ուր խաչքարերի համալիր ուսումնասիրության համատեքստում մանրամասն քննության են առնված կոթողի ծագման ու զարգացման առանձնահատկու-

*Հոդվածն իբրև գեկուցում 2015 թ. ներկայացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտնականների 14-րդ միջազգային գիտաժողովին (տե՛ս **Հարությունյան Ա.**, ԺԷ-ԺԸ դդ. եկեղեցիների որմերին ագուցված խաչքարերը. հորինվածք, գործառույթ, հիշատակագրություն, «Ազգաբանություն, հնագիտություն, բանագիտություն» երիտասարդ գիտնականների 14-րդ միջազգային գիտաժողով, գեկուցումների դրույթներ, Եր., 2015, էջ 31-33): Ընդունվել է տպագրության 10. 02. 2017:

¹ Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ձարտարապետներ և քարգործ վարպետներ, Եր., 1963, **Ազարյան Լ.**, Հայկական խաչքարեր. արբոմ-ուսումնասիրություն, Ս. Էջմիածին, 1973, **Կարախանյան Գ.**, Երաժիշտ կատարողների քանդակներ 12-13-րդ դդ. խաչքարերի վրա, «Լրաբեր հաս. գիտ.», 1976, N 3, էջ 99-105, **Շահինյան Ա.**, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դդ. խաչքարերը, Երևան, 1984, **Կարապետյան Ս.**, Ջավախքի խաչքարերը, Եր., 1995, **Manoukian Armen and Agopik.** Documenti di architectura Armena. vol. 2. Khatchkar. Milano, 1969, **Якобсон А.** Армянские хачкары. Ереван, 1986.

² Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008:

թյունները:

Մեր հերթական անդրադարձը վերաբերում է մինչ օրս հատուկ ուշադրության չարժանացած 17-18-րդ դդ. հոգևոր կառույցների շարվածքում ագուցված խաչքար-կոթողներին. քննության են դրվել դրանց հորինվածքը, գործառույթը, ինչպես նաև հիշատակագրությունները, քանի որ այդօրինակ խաչքարերը հիմնականում արձանագիր են: Ուսումնասիրության համար ընտրել ենք Արարատյան դաշտի՝ նշված ժամանակաշրջանով թվագրվող այն հուշարձանները (Խոր Վիրապի Ս. Աստվածածին, Վաղարշապատի Ս. Շողակաթ, Մուղսիի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին, Նորագավիթի Ս. Գևորգ, Զորավոր Ս. Աստվածածին, Կոնդի Ս. Հովհաննես), որոնց որմերն աչքի են ընկնում տվյալ կառույցին ժամանակակից և սովորականից քիչ ավելի փոքր, արտաքուստ ագուցված խաչքարերով:

Այն, որ դեռևս 10-11-րդ դդ. խաչքարերն ագուցվել են եկեղեցիների որմերին իբրև գեղարվեստական հարդարատար, հայտնի իրողություն է: Անվանի վիմագրագետ **Սեդրակ Բարխուդարյանը** նշում է, որ խաչքարերը նաև մեր ճարտարապետական հուշարձանների հարդարման կարևոր բաղկացուցիչն են, որոնք ոչ միայն տեղադրվում էին եկեղեցիների մուտքերի մոտ, ներսում կամ արևելյան պատի տակ, այլև շինարարության ժամանակ ագուցվում էին պատերի մեջ: Վերջինիս դեպքում նրանք «...սովորականից ավելի կարճ են լինում և նրանց վրա գրվում են շինության մեկենասների հիշատակագրությունները»³: Ս. Բարխուդարյանը շեշտում է, որ ինքը նկատի չի առել հին, այսինքն՝ կառույցից վաղ թվագրմամբ խաչքարերը, որոնք շատ հաճախ տեղահան էին արվում ու պատերի մեջ ագուցվում «երբեմն ճաշակով, երբեմն էլ խիստ անձաշակ ու անկարգ»⁴: **Հատկանշական է, որ հիշյալ բնութագրականը տեղին է նաև քննության ենթակա խաչքարերի համար, քանի որ նրանք ևս ժամանակակից են շինությանը**, իսկ հիշատակագրություններում վկայված անձինք հիմնականում եկեղեցիների կառուցման ծախսերը հոգացած մեկենասներն են, երբեմն նաև նրանց հարազատները, աշխատանքներին վերակացու կարգված հոգևորականը կամ աշխարհիկ մեկը, շինարար վարպետը և այլք:

12-13-րդ դդ. մի շարք հուշարձանների (Յաղաց Քար, Գոշավանք, Դեղձուտի վանք, Հովհաննավանք, Նորավանք, Դադիվանք և այլն) օրինակով համանման տեսակետ է հայտնել նաև վիմագրագետ **Աբրահամ Շահինյանը**, նշելով, որ տաճարների ու գավիթների որմերին ագուցված խաչքարերը. «...ճարտարապետական հուշարձանների արտաքին ճակատների և ներքին ծավալների հարդարման կարևոր տարրեր են»⁵, միաժամանակ նաև «...միահյուսվելով հիշյալ հուշարձանների արևմտյան ճակատների հետ, վերջիններիս տալիս են շքեղ տեսք»⁶:

Հ. Պետրոսյանի համոզմամբ՝ խաչքարերի՝ եկեղեցիների որմերին ագուցման կամ այլ կերպ ասած՝ եկեղեցիների «խաչքարայնացման» մի-

3 Տե՛ս **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 132:
4 Նույն տեղում:
5 Տե՛ս **Շահինյան Ա.**, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դդ. խաչքարերը, էջ 61:
6 Նույն տեղում:

ջոցով շեշտվում էր «...գերակա սրբությանը (այսինքն՝ եկեղեցուն) ավելի մոտ և երկրպագողներին ավելի տեսանելի դարձնելու ձգտումը»⁷: Այսինքն՝ խաչքարերը ոչ միայն ապահովում էին կառույցների գեղազարդումը, այլև հիմքում ունեին **խաչքար – տաճար** միասնական կապի ստեղծման գաղափարը:

Մինչ խաչքարերի ու դրանց վիմագրերի քննությանն անցնելը նախ ճշտենք, թե ինչպիսի ժամանակաշրջանում ի հայտ եկավ ագուցվող խաչքարերի այս տեսակը: Թվում էր, թե 17-րդ դարավերջին խաչքարային արվեստը հասել էր գարգացման իր գագաթնակետին, որի գլուխգործոցը, թերևս, Ջուղայի խաչքարերն էին⁸: **Նկատենք, որ քննության ենթակա հուշարձանները, որոնց որմերին ագուցված են նման խաչքարեր, մեծ մասամբ կառուցվել են Երևանի՝ 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժից հետո:** Այսինքն՝ 17-րդ դարավերջին դարձյալ մեծ թափ ստացավ եկեղեցաշինությունը, որի առաջնահերթ նպատակն էր վերականգնել երկրաշարժից ավերված երբեմնի նշանավոր հոգևոր կենտրոնները: **Ահա հենց այս ժամանակաշրջանում հայկական ճարտարապետության մեջ, իբրև եկեղեցիների առանձին քանդակային հարդարատարր, մշակվում ու լայն տարածում է ստանում ագուցվող խաչքարերի քննվող տեսակը:**

Հորինվածքը: 17-18-րդ դդ. եկեղեցիների որմերին ագուցված խաչքարերն առաջին հերթին աչքի են ընկնում քանդակային պարզ հարդարանքով, երիզված են հյուսածո բուսական ու երկրաչափական պարզունակ զարդանախշերով, կենտրոնի՝ մեծ մասամբ սլաքածն խորանում հիմնախաչն է՝ արտահայտված դարձյալ հյուսածո ոճով, ունեն անզարդ խաչախորք, արմավազարդ՝ առանց վարդյակի:

Խաչքարերի քանդակային հարդարանքի պարզ հորինվածքը, թերևս, տվյալ ժամանակաշրջանի հրամայականն էր: Արվեստաբան **Լևոն Ազարյանը** նկատում է, որ 17-րդ դարում Հայաստանի բաժանումը Թուրքիայի ու Իրանի միջև չնայած որոշակի աշխուժություն ստեղծեց մշակութային կյանքում, սակայն խաչքարային արվեստը երբեք չհասավ միջնադարի մակարդակին, քանի որ հայ ժողովուրդը կորցրել էր պետականությունը և գուրկ էր համազգային նշանակության շինարարություններ ստեղծելու հնարավորությունից⁹: Լ. Ազարյանի համոզմամբ՝ այդ է պատճառը, որ «...այս շրջանի խաչքարերի զարդաքանդակներն ու պատկերաքանդակները դառնում են պարզունակ՝ կորցնելով իրենց նախկին նրբագեղ ու բարդ ձևերը, հյուսվածքների անկրկնելիորեն հարուստ հնարները»¹⁰:

Հ. Պետրոսյանը առանձին կանգնած խաչքարերի օրինակով նշում է, որ 16-17-րդ դդ. խաչքարային հորինվածքում ի հայտ է գալիս մի ուղղություն, ուր «...վարդյակն առանձնանում է խորանից, անզարդ խաչախորքը, «բուսական» արմավազարդն ու խաչը հստակորեն պահպանում

7 Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, էջ 333:

8 Տե՛ս Արտաշես Վրոյր, Արամ Վրոյրի «Ջուղա» հնագիտական անտիպ ակնարկը, ՊԲՀ, 1967, N 4, էջ 169-180, Այվազյան Ա., Ջուղայի խաչքարերը, Եր., 1993, Հասարթյան Մ., Խաչքարային արվեստի Ջուղայի ստեղծագործական դարոցը, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Եր., 2000, էջ 193-196, Պետրոսյան Հ., Խաչքար, էջ 222-233:

9 Տե՛ս Ազարյան Լ., Հայկական խաչքարեր. արբոմ-ուսումնասիրություն, էջ 16-17:

10 Նույն տեղում, էջ 17:

են այս խմբի հորինվածքի առանձնահատուկ տեսքը»¹¹: Նմանատիպ խաչքարի լավագույն օրինակ է Գթաշեն գյուղատեղիից (ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լձավան գյուղից 4 կմ արևմուտք) Վաղարշապատ տեղափոխված 16-րդ դ. հուշարձանը, որի հորինվածքում վարդյակն արմավազարդից բաժանված է ելնդավոր գլանով¹²: Այս երևույթը, ըստ Հ. Պետրոսյանի, սկիզբ է առել 13-րդ դ. և տարածում ստացել հետագա դարերում¹³:



Նկ. 1-3: 17-18-րդ դդ. եկեղեցիների որմերին ագուցված խաչքարեր (ա. Նորագավիթի Ս. Գևորգ, բ. Մուղնիի Ս. Գևորգ, գ. Վաղարշապատի Ս. Շողակաթ)

Քննության առարկա խաչքարերի դեպքում պատկերն առավել քան յուրօրինակ է. **վարդյակը ոչ թե առանձնացված է արմավազարդից ու հիմնախաչից, այլ ընդհանրապես տեղ չի գտել քանդակային հորինվածքում**: Եթե վարդյակի բացակայությունը պայմանավորենք խաչքարի համար նախատեսված սալաքարի փոքր չափերով, ապա հարց է առաջանում՝ ինչու տեղավորել գրեթե բոլոր անհրաժեշտ բաղադրիչները, բացի վարդյակից, ի վերջո այն կարելի էր արտահայտել անգամ կիսաշրջանի, Գողգոթայի բլուրը խորհրդանշող աստիճանաձև պատվանդանի կամ փոքր եռանկյունու տեսքով: Նկատի առնենք նաև այն, որ խաչքարային հորինվածքի ձևավորման վերջնական փուլում (11-րդ դ. կեսեր) վարդյակն ու արմավազարդը հանդես էին գալիս փոխկապակցված՝ իբրև խաչատակի հորինվածքի հիմնական բաղադրիչներ¹⁴: Այստեղից հետևություն, որ խաչքարերի հարդարանքում վարդյակի բացակայության փաստը պետք է ունենա իր բացատրությունը:

Վարդյակի խորհրդարանությունը խաչքարային հորինվածքում տարբեր կերպ է մեկնաբանվում: Հ. Պետրոսյանը նշում է, որ խաչային հորինվածքում առաջին վարդյակները հանդիպում են արդեն վաղ միջնադարում, սակայն նրա լիարժեք պատկերումները խաչքարերի վրա վավերացված են միայն 11-րդ դարից (Խծկոնք, Ցաղաց Քար և այլն): Վարդյակը, որը բուսական-կենսածառային կերպավորմամբ խաչի ծագման հիմքն է, ըստ Հ. Պետրոսյանի՝ խորհրդանշում է.

11 Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, էջ 201:

12 Մինչ Վաղարշապատ տեղափոխվելը խաչքարը կանգնեցված է եղել գյուղատեղիի ավերակ եկեղեցու մեջ: Քիվին առկա է միատող հետևյալ արձանագրությունը. «ԱՄՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ՍԱՆԼԹՎՆԴՈՒՒԼՆ» (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ Բարխուդարյան Ս., 1973, էջ 299, արձ. 1242, Հարությունյան Ա., Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 109, արձ. 99):

13 Տե՛ս Պետրոսյան Հ., Խաչքար, էջ 280:

14 Նույն տեղում, էջ 285:

Երկրային, ապա երկնային Գողգոթան,
Քրիստոսի և խաչի լուսային-աստղային գալուստը,
Երկիրն ու երկրային սկիզբը (տիեզերքը),
Պատարագի սեղանը կամ ծիսական սինի-սեղանը¹⁵:

Կարծում ենք՝ աստվածաբանական ուշագրավ խորհրդաբանություն կրող վարդյակի բացակայությունը քննվող խաչքարերում, թերևս, պետք է պայմանավորել նախ և առաջ դրանց՝ եկեղեցիների արտաքին որմերի՝ հիմնականում բարձրադիր հատվածներում (ճակտոններ, բարավորներ, լուսամուտների վերնամասեր և այլն) ագուցված լինելու հանգամանքով, երբ իբրև վարդյակ, հավանաբար, հանդես է գալիս եկեղեցին, որից «ծնվում է» կենացճառային, այս դեպքում՝ հյուսածո խաչը, կամ որի որմերը տվյալ խաչի հիմքն են: Այսինքն՝ խաչքարին տրվել է պարզունակ հորինվածք, միաժամանակ նաև՝ խորհրդաբանական, համաձայն որի՝ պատարագի սեղանը խորհրդանշող վարդյակին հաճախ կարող էր փոխարինել եկեղեցին: Մեր տեսակետը հիմնավորող լավագույն օրինակ է Սրբանեսի վանքի (ՀՀ Լոռու մարզ, գ. Արդվի) գերեզմանոցում կանգնեցված խաչքարի եկեղեցակերպ վարդյակը¹⁶:



Նկ. 4: Եկեղեցի-վարդյակ խաչքարային հորինվածքում, Սրբանեսի վանք, 1581 թ.

Եկեղեցի-վարդյակ կապն առնչվում է նաև կոթողների գործառույթային նշանակությանը:

Գործառույթը: Ուշմիջնադարյան ագուցված խաչքարերը կարևորվում են նաև իրենց գործառույթով: Ըստ Լ. Ազարյանի՝ «բազմաթիվ են եկեղեցիների պատերին ագուցված խաչքարերը, որոնք մեծ մասամբ նվիրատվական նշանակություն ունեն»¹⁷: Լ. Ազարյանի այս միտքը հիմնավորվում է, երբ քննության ենք առնում նրանց հիշատակագրությունները, որոնց ստորև դեռ կանդրադառնանք:

Մինչ այդ նկատենք, որ **ագուցված խաչքարերով հարդարված են հուշարձանների հիմնականում արևելյան որմերը** (Զորավոր Ս. Աստվածածին, Կոնդի Ս. Հովհաննես, Քանաքեռի Ս. Հակոբ, Նորագավիթի Ս. Գևորգ և այլն): Նման երևույթը կարող էր զուտ գեղագարդման պատճառ լինել, եթե հաշվի չառնենք այն, որ **Արևելքը ցուցանում է Քրիստոսի Արդարության արեգակի երկրորդ գալստյան ուղղությունը**. պատահական չէ նաև բազիլիկ տաճարների արևմուտք-արևելք առանցքով ուղղվածությունը, որի հիմքում հավատացյալի՝ Աստծո հետ հաղորդակցվելու ձգտումն

15 Նույն տեղում, էջ 281, 283-285:

16 «Դիվան հայ վիմագրության», սրակ IX, Լոռու մարզ, կազմեցին՝ Բարխուդարյան Ս. Գ., Ղաֆադարյան Կ. Գ., Սաղումյան Ս. Տ., Եր., 2012, էջ 324, արձ. 713:

17 Տե՛ս Ազարյան Լ., Հայկական խաչքարեր, էջ 14:

է, փրկության անփոփոխ ու ապաժամանակյա գաղափարի ծիսական գործառնությունը¹⁸: **Կարծում ենք՝ խաչքարի ագուցումն այս դեպքում արևելյան պատը հատուկ ընդգծելու միտում ունի, քանի որ խաչքարն ինքնին, իբրև կանոն, պետք է ճակատով նայեր դեպի արևմուտք, ինչը տվյալ դեպքում պահպանված չէ:**

Եկեղեցու՝ խաչքարերով պատված արևելյան որմն ունի նաև հիշատակարանային գործառնոյթ, երբ խաչերն ըստ վիմագրերի կերտվում ու ագուցվում են «ի յիշատակ» կամ «ի բարեխաւսութիւն» այս կամ այն անհատի, որն իր միջամտությունն է ունեցել Աստծո տաճարի կառուցման գործում:



Նկ. 5-8: Խաչքարերով հարդարված եկեղեցիների արևելյան որմեր (ա. Զորավոր Ս. Աստվածածին, բ. Կոնդի Ս. Հովհաննես, գ. Քանաքեռի Ս. Հակոբ, դ. Քանաքեռի Ս. Աստվածածին)

Այսպես կարելի է մեկնաբանել նաև եկեղեցիների գլխավոր մուտքերի բարավորներին կամ ճակատակալ քարերին ագուցված խաչքարերի խորհուրդը (Վաղարշապատի Ս. Շողակաթ, Մուղնիի Ս. Գևորգ, Նորագավիթի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Աստվածածին և այլն): Նման խաչքարերը հիմնականում ուղեկցվում են ստորին մասում գետեղված եկեղեցու կառուցման գլխավոր ու ընդարձակ արձանագրությամբ, ուր, սովորաբար, վկայված են հոգևոր առաջնորդի, վերակացուի, մեկենասի ու վերջինիս հարազատների անունները:

18 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքար, էջ 333:



Նկ. 9-10: Եկեղեցիների բարավորներին ագուցված խաչքարեր
(ա. Մուղնիի Ս. Գևորգ, բ. Քանաքեռի Ս. Աստվածածին)

Կարելի է ձևակերպել բարավորներին ագուցված խաչքարերի գործա-
ռությանին նշանակությանը վերաբերող մի տեսակետ ևս. **եկեղեցու հիմ-
նականում արևմտյան գլխավոր մուտքի վերնամասում ագուցված
խաչքարը կարծես «միջնորդ» է հավատացյալի ու Աստծո միջև**: Այս-
հովելով մարդու մուտքը տաճար՝ այն ձեռք է բերում մեղսաքավիչ ուժ,
ինչը փոխանցելով անհատին՝ ուղղորդում է դեպի Սուրբ խորան:

Չմոռանանք մի կարևոր հանգամանք ևս. 12-14-րդ դդ. վիմագրերի
սկզբնամասում հիմնականում խաչ էր պատկերվում՝ արտահայտված կան
գծային, կան շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչի տեսքով: **Այս-
տեղից հետևություն, որ ուշ միջնադարում վիմագրի սկզբնամասի
խաչը կարող էր փոխարինվել բարավորին ագուցված փոքր խաչքա-
րով, որին դարձյալ հաջորդում էր բուն վիմագիրը**:

Հետաքրքիրն այն է, որ եկեղեցու ավագ խորանի բեմառեջքին ևս, սո-
վորաբար, ագուցվում էին նմանատիպ խաչքարեր, որի դասական օրի-
նակներից է Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցու խաչքարազարդ
բեմառեջքը: Այն հարդարված է ագուցված չորս արձանագիր խաչքարերով
և վարդյակաձև զույգ զարդաքանդակներով:



Նկ. 11: Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցու բեմառեջքը

Նման դեպքերում ևս խաչքարը կարծես հանդես է գալիս ոչ միայն որպես եկեղեցու ներքին գեղազարդման միջոց, այլև աղոթողի ու Աստծո միջև «միջնորդ»:

17-18-րդ դդ. խաչքարերի ինքնատիպ դրսևորումներից մեկն էլ եկեղեցիների լուսամուտների վերնամասերում ագուցելն էր: Սրա վառ օրինակը Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցին է, երբ կառույցի բոլոր պատուհաններն անխտիր պսակված են արտաքուստ ագուցված խաչքարերով¹⁹: Սրանք չափերով առավել փոքր են մյուսներից, սակայն քանդակային հարդարանքում կրկնում են միմյանց: Եկեղեցու որմերին առկա նման երևույթի բացատրությունը, թերևս, պետք է փնտրել լույսի խորհրդաբանության մեջ: Եկեղեցու լապտերների «մշտնջենավոր լույսը» 7-րդ դ. մատենագիր Հովհան Մայրավանեցին պայմանավորում է արդարների պայծառության խորհրդով²⁰: Քրիստոնեական ընկալմամբ լույսը նաև ոսկի-լույս-արև հիերարխիկ կապի անքակտելի մասն է, որը խորհրդանշում է Քրիստոսին՝ որպես աշխարհի լույսի ու Արդարության արեգակի: Արժևորելով աստվածային անապակ լույսի խորհրդանիշ ոսկու դերը Գրիգոր Լուսավորիչի հայտնի տեսիլքում՝ Հ. Պետրոսյանը զուգահեռներ է անցկացնում նաև ոսկի-լույս փոխկապակցված երևույթի միջև՝ նշելով, որ լույսը տեսիլքում հանդես է գալիս իբրև աստվածային էության բացարձակ սիմվոլ, միաժամանակ նաև «...խորհրդանշում է աստվածային գործության՝ անհամատեղելի համատեղելու կարողությունը»²¹:



Նկ. 12: Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցու խաչքարով պսակված լուսամուտներից

Շեշտելով քրիստոնեական տաճարների ծավալատարածական առանցքների կարևորությունը, որոնք **ուղղաձիգ** են, այսինքն՝ նրանց ամենաբարձր բաղկացուցիչը գմբեթն է, որը պսակված է խաչով և **երկայնական**, այսինքն՝ բեմ-խորանով. վերջինիս կենտրոնում Ս. Սեդանն է, որն ավարտվում է արևելյան պատուհանով: Իրանից Հ. Պետրոսյանը գալիս է այն եզրահանգման, որ տաճարների այս երկու առանցքային տիպերը խորհրդանշող փրկչագործական ու Աստծո հետ հաղորդակցվելու ծիսական ուղղությունները միավորող աստվածային լույսը

պայմանավորում էր եկեղեցական պարագաների (սպասք, կարասի, հանդերձանք և այլն) «ոսկեղենությունը»: Լույսն ինքը «...մի դեպքում ցուցում է երկինքը, որպես լույս-աստծո մշտական հանգրվան, իսկ երկրորդ դեպքում՝ արևելքը, որպես Քրիստոսի՝ Արդարության արեգակի երկրորդ գալստյան

19 Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցու պատմության և վիճագրերի մասին տես **Հարությունյան Ա.**, Նորագավիթ բնակավայրը և Ս. Գևորգ եկեղեցու վիճագրերը, ՊԲՀ, 2017, N 2, էջ 143-161:

20 Տես **Քյոսեյան Հ.**, Հովհան Մայրավանեցու «Վերլուծությունը Կաթողիկե եկեղեցու» աշխատությունը, «Իրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության», Ս. Էջմիածին, 1995, էջ 79:

21 Տես **Պետրոսյան Հ.**, Ոսկին հայ միջնադարյան աշխարհընկալման համակարգում, «Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ-մ.թ. XIV դար)», Եր., 2007, էջ 65:

ուղղություն»²²:

Վերոնշյալ վկայություններն առաջնահերթ ցուցանում են լույսի՝ աստվածային զորության հետ ունեցած առնչությունները, քանի որ «...աստվածայինի հետ առնչվող ցանկացած երևույթ անխուսափելիորեն առնչվում է լույսի գաղափարին»²³:

Այժմ հասկանանք, թե ինչ կապ կարող է ունենալ խաչքարն այս ամենի հետ և ինչպես կարելի է բացատրել նրա տեղադրումը լուսամուտի վերնամասում: Ինչպես վերը նկատեցինք, այս տիպի խաչքարերի յուրահատկություններից էր վարդյակի բացակայությունը: Արդեն նշվեց, որ վարդյակը խաչքարային հորինվածքում խորհրդանշում էր նաև Քրիստոսի կամ խաչի լուսային-աստղային գալուստը: Լուսամուտը, ըստ էության, ապահովում էր տաճարի ներսում լույսի ներթափանցումը, հետևաբար, լուսամուտը ևս ուներ բոլոր նախադրյալները հանդես գալու իբրև «վարդյակ» տվյալ խաչքարի համար: Ստացվում է, որ եթե դռան վերնամասում ազուցված խաչքարը մենք հակված ենք պայմանականորեն համարելու միջնորդ մարդու և Աստծո միջև, ապա խաչքարակիր լուսամուտն ինքնին պետք է որ խորհրդանշեր աստղագարդ վարդյակը, որը «...արևա-լուսային և տիեզերական խորհրդաբանությանը մաս կազմելուց զատ կարող էր ցուցել Քրիստոսի և խաչի լուսային-աստղային գալուստը»²⁴:

Հիշատակագրությունը: Վերն արդեն նշեցինք, որ 17-18-րդ դդ. ազուցված խաչքարերը հիմնականում արձանագիր են լինում, որոնք փաստացի տեղեկություններ են հաղորդում եկեղեցիների կառուցման ժամանակի, մեկենասների, երբեմն նաև շինարար վարպետների մասին: Հիշատակագրությունները հիմնականում հակիրճ են, փորագիր, բաղկացած առավելագույնը 3-4 տողից, ունեն կաղապարային սկավադքներ. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ...» կամ «ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ Է...», ուղեկցվում են համառոտագրություններով ու կցագրերով, որոնք հաճախ կրում են «պատիվ» նշան, ինչպես, օրինակ՝ ՅՇՏԿ- ՅԻՇԱՏԱԿ, ԽՉՍ- ԽԱՉՍ՝ ՄԲ - ՍՈՒՐԲ և այլն:

Եկեղեցու որմերին ազուցված խաչքարերի վիմագրերը երբեմն գլխավոր մուտքի ճակատակալ քարի ծավալուն արձանագրության ամփոփ տարբերակներն են կամ առանձին մասերը: Ս. Շողակաթի վիմագրերի քննությունը պատկերն ավելի քան որոշակի է դարձնում. գլխավոր արձանագրության մեջ հիշատակված անձանց անուններով առանձին խաչքարեր են ազուցվել նաև եկեղեցու արտաքին որմերի ճակտոններին²⁵:

22 Նույն տեղում, էջ 66:

23 Տե՛ս **Սարգսյան Ռ.**, Հայկական վաղքրիստոնեական լուսային անվանաբանության մասին (նախնական դիտարկումներ), Հարիտուս Ի. Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն (25-27 հոկտեմբեր, 2010, միջազգային գիտաժողովի նյութեր), Եր., 2014, էջ 328:

24 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Խաչքար, էջ 284:

25 Ս. Շողակաթ եկեղեցու որմերին ազուցված խաչքարերին ու նրանց հիշատակագրություններին անդրադարձել ենք այլ առիթով (տե՛ս **Հարությունյան Ա.**, Ս. Հռիփսիմեի և Ս. Շողակաթի վանքերի որմերին ազուցված խաչքարերի նորահայտ վիմագրերը, «Էջմիածին», 2011, Ե, էջ 88-94):



Գծանկ. 1-5: Ս. Շողակաթ եկեղեցու որմերին ագուցված խաչքարերի ու դրանց վիմագրերի գրչապատկերներ

Այսպես՝ եկեղեցու շինարարական արձանագրության համաձայն՝ այն կառուցվել է Նահապետ Ա. Եղեսացի (1691-1705) կաթողիկոսի օրոք՝ 1694 թ., նախիջևանցի Աղամալի միջոցներով. «...ՇՈՂԱԿԱԹ ԱՆՈՒԱՄԲ ՏԱՃԱՐՍ ԿԱՆԳՆԻ, Ի ԹՈՒՒԱԿԱՆԻՍ ՄԵՐ ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՀԱԶԱՐ ԵՒ ՀԱՐԻՐ ՔԱՆԱՍՈՒՆԵՐԵՔԻ (1694), Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԼԱՆՆ, ՄԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԼԵԱՌՆ ՆԱՀԱՊԵՏԻ ՀՕՐ ՍՐԲԱԶԱՆԻ, ԱՐԴԵԱՄԲ ԱՂԱՄԱԼԻՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՆԻ, ԳՈՂՈՎ ՔԱՂԱԲԷՆ ՆԱԽԻՋԵԿԱՆԻ...»²⁶: Վիմագրում հիշատակված են Աղամալի ծնողները՝ Աղաջանն ու Նանագուլը, կողակից Մարիամը, որդիները՝ Ագաթանգեղոսը, Աղեքսանդրոսը, Ալբերդիոսն ու Խարիսիմոսը, դուստրերը՝ Նոյեմզարը, Ասանեթն ու Նանագուլը: Նշված ծավալուն վիմագրից գատ՝ առանձին խաչքարեր են ագուցվել եկեղեցու արևելյան որմին նախիջևանցի Աղամալի անունով (գրչ. ա), արևմտյան որմին՝ ծնողների՝ Աղաջանի ու Նանագուլի (գրչ. բ), հյուսիսային կողմում՝ Աղամալի և նրա կողակից Մարիամի (գրչ. գ), իսկ հարավային որմի գույգ խաչքարերից մեկը ձոնված է Աղամալի որդի նախիջևանցի Ալբերդիոսին, սյուսը՝ Ղազբինցի տեր Օվանեսին (գրչ. դ-ե), որը, ըստ էության, շինարարական աշխատանքների վերակացու հոգևորականն է: Նշենք, որ եկեղեցու հյուսիսային որմին ագուցված խաչքարին վկայված է նաև ուստա, այսինքն՝ վարպետ Հայրապետի անունը, որը, թերևս, խաչքարերի հեղինակն է կամ ողջ կառույցի ճարտարապետը: Փաստորեն խաչքարային հիշատակագրություններն իբրև արժանահավատ վկայագրեր, ունեն նաև փաստական կարևորություն: **Խաչքարի ագուցումն Աստծուց բարեխոսություն ու հոգու փրկություն աղերսելու նպատակ էր հետապնդում, իսկ ի դեմս հիշատակագրության՝ խաչքարը նաև միջոց էր վավերագրեր կազմելու համար:**

Նույնն է նաև Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերի դեպքում: Ի տարբերություն Ս. Շողակաթի՝ այստեղ խաչքարերը մեկտեղված ու համաչափ դասավորված են եկեղեցու արևելյան որմին: Պահպանված չափածո շինարարական արձանագրության համաձայն (փորագրված եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ՝ մուտքից աջ)՝ այն կառուցվել է դարձյալ Նահապետ կաթողիկոսի օրոք՝ 1693 թ., խոջա Փանոսի

26 **Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխ.՝ **Ա. Տէր-Ստեփանյանի**, Ս. Էջմիածին, 2014, էջ 199-200, **Ղևոնդ Ալիշան**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանայց, Վենետիկ, 1890, 235-236, **Հարությունյան Ա.**, Վաղարշապատ, էջ 338-339, արձ. 679:

միջոցներով, իր, ծնողների, որդիներ էլիագի ու Մովսեսի, թոռան՝ Ահարոնի հիշատակին. «...ԽՈՃԱՅ ՓԱՆՈՍ ՎԵՐԱՅՁԱՅՆԻ, ՄԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՍ ՇԻՆՈՂԻ, ՅԼԻՇԼԱՏԼԿ ՈՒՐՆ ԵՒ ՆԱԽԻ ԾՆՕՂԱՑ ՈՒՐԱՅ, ՀԱՐՅՆ ԱՌԱՋԻ, ՈՐԴՈՑ ՈՒՐԱՅՆ՝ ԷԼԻԱԶԻ ԵՒ ՄՈՎՍԵՍԻ, ՔԱՂՅՐ ՈՂԿՈՋԻ, ԹՆԱՄՆ ՈՒՐՈՑ՝ ԱՀԱՐՈՆԻ, ՋԱՆԿԱԿԱՏՆՕՔ ՍԱ ՋԱՐԴԱՐԻ...»²⁷: Փանոսն ու նրա որդիները հիշատակված են նաև նույն եկեղեցու խաչքարային հիշատակագրություններում, դեռ ավելին, առանձին խաչքարեր են կերտվել ու ագուցվել Փանոսի կողակից Հուրիխանի, վերակացու Ալեքսանի որդի Հովհաննեսի անուններով, մեկ այլ հիշատակագրություն էլ հայտնում է Փանոսի հոր՝ Սատիպէլի անունը:

Ինչ վերաբերում է Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցու խաչքարային հիշատակագրություններին, ապա պետք է նշենք, որ այստեղ ևս պատկերը գրեթե նույնն է: Ս. Աստվածածին եկեղեցին, որը ճարտարապետական տեսանկյունից կարծես Ս. Շողակաթի կրկնօրինակը լինի, աչքի է ընկնում արտաքին որմերի ճակատային մասերում ագուցված մեկական խաչքարերով, որոնցից երեքն արձանագիր են: Հիշատակագրություններում նորահայտ կարդում ենք շաղկերտցի Միրիմանի որդի Հարությունի և Պողոսի, խոջա Բաստամի, պարոն Ստեփանի անունները, որոնց միջոցներով հավանաբար իրականացվել է եկեղեցու շինարարությունը:



Գծանկ. 6-8: Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցու որմերին ագուցված խաչքարերի ու նրանց վիմագրերի գրչապատկերներ

ա. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԽՕՁԱՅ ԲԱՍՏԱՄԻՆ / ԵՒ ՈՐԴՈՑՆ՝ ՊԱՐՈՆՍ ՍԵՓԱՆԻՆ ԵՒ ԱՅԼՈՑՆ, ԹՎԻՆ՝ ՌՃԾԲ. (1703):

բ. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵ/ԽԱԻՍ ՇԱԽԿԵՂՐՏՑԻ ՄԻՐԻ/ՄԱՆԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԼԻԻՆԻՆ / ԵՒ ՊՕՂՈՍԻՆ, ԹՎԻՆ՝ ՌՃԾԲ. (1703):

գ. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՎԷ/ԹՅԻ ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵ/ՏԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ²⁸:

27 **Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանց**, էջ 303, **Ղևոնդ Ալիշան**, Այրարատ, էջ 313, **Ե. Շահագիզ**, Հին Երևանը, Եր., 2003, էջ 196-197, **Կ. Ղաֆաղարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Եր., 1975, էջ 166:

28 Վիմագրերի ռուսերեն թարգմանությունները տեղ են գտել Կովկասի հնագիտության նյութերի ժողովածուում (МАК), սակայն, խիստ աղավաղված և սխալաշատ (Материалы по археологии Кавказа. Собранные экспедициями императорского московского археологического общества, под редакцией **Уваровой П. С.** Вып. XIII. Москва, 1916, с. 77): Խոր Վիրապի վիմագրական ժառանգությունն ամբողջացվել է մեր՝ վերջերս հրատարակված գրքում. **Հարությունյան Ա.**, Խոր Վիրապ. պատմությանը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը, Եր., 2017:

Վիմագրերից վերջինը հայտնում է ծագումով Վեդիից Ղազար վարդապետի անունը, որը տվյալ ժամանակաշրջանում եղել է վանքի վանահայրը, միաժամանակ նաև շինարարական աշխատանքների վերակացուն²⁹:

Խաչքարային հիշատակագրությունները վկայում են, որ նմանատիպ կոթողներն առաջին հերթին կերտվել են եկեղեցու նվիրատուների, տվյալ դեպքում՝ մեկենասների ու նրանց հարազատների, ապա նաև վերակացու հոգևորականների համար՝ ի բարեխոսություն առ Աստված: Խաչքարային որոշ վիմագրեր էլ հավերժացրել են այցելու-նվիրատուների անունները, ինչպես, օրինակ՝ Խոր Վիրապի խաչքարագարդ բեմառեջքի հիշատակագրությունները, համաձայն որոնց՝ դրանք կերտվել են ի բարեխոսություն Մկրտումին, Իսրայելին, Մովսեսին ու նրանց ծնողներին, բստացի Ավետիքին, ղարաբաղցի Խաթունին և նրա հայր Հովսեփին, ակոռեցի տեր Նիկողոսի եղբայր Մովսեսին: Նշված անձինք, ըստ ամենայնի, որոշակի միջոցներ են տրամադրել վանքի բարեգարդման համար ու պատիվ ունեցել խաչքարեր ագուցելու եկեղեցու բեմառեջքին:

Եզրահանգումներ: Ընդհանրացնելով 17–18–րդ դդ. եկեղեցիների որմերին ագուցված խաչքարերի վերաբերյալ վերը նշված դիտարկումները՝ կարող ենք արձանագրել հետևյալը:

Ա. Քննվող խաչքարերը նախ առանձնանում են իրենց հորինվածքային առանձնահատկությամբ, մասնավորապես՝ ունեն պարզ հարդարանք, հյուսածո խաչ ու եզրագոտի, անգարդ խաչախորք, արմավագարդ՝ առանց վարդյակ: Վերջինիս բացակայությունը մենք պայմանավորեցինք խաչքարերի՝ եկեղեցու բարձրադիր ու տեսանելի հատվածներում ագուցելու երևույթի հետ, երբ իբրև վարդյակ, թերևս, հանդես էր գալիս եկեղեցին: Այս առումով ինքնատիպ է Սրբանեսի վանքի խաչքարի եկեղեցաձև վարդյակը:

Նման կերպ է բացատրվում նաև լուսամուտների վերնամասերում խաչքարերի ագուցումը. այս դեպքում վարդյակին փոխարինում է խաչքարակիր լուսամուտը, որը, լույսի խորհրդաբանությամբ պայմանավորված, թերևս խորհրդանշում է Քրիստոսի և խաչի լուսային-աստղային գալուստը:

Բ. Այսօրինակ խաչքարերով հիմնականում հարդարվել են եկեղեցիների արևելյան որմերը, հավանաբար, հիմքում ունենալով արևելքի՝ Քրիստոսի Արդարության արեգակի երկրորդ գալստյան ուղղության գաղափարը: Նմանատիպ խաչքարեր են ագուցվել նաև եկեղեցիների արտաքին որմերի ճակատային մասերում, գլխավոր մուտքերի բարավորներին, լուսամուտների վերնամասերում, ավագ խորանի բեմառեջքին և այլուր: Այս երևույթի հավանական բացատրությունը խաչքարի՝ Աստծո և հավատացյալի միջև «միջնորդ» լինելն է:

Գ. Ագուցված խաչքարերն ունեն ոչ միայն գեղագարդման, այլև հիշատակարանային գործառույթ, քանի որ ի դեմս արձանագրությունների՝ փաստացի տեղեկություններ են հաղորդում շինության ժամանակի, մեկենասի ու

29 Խոր Վիրապի գրչության կենտրոնին նվիրված հոդվածում պատմաբան Կարեն Մաթևոսյանը նկատում է, որ «Դավիթ Բ.-ից հետո, 1695-ից, վանքի վանահայրն է Ղազար վարդապետը, որը հիշվում է մինչև Ղազար Ա. Ջահկեցի (1737–1751) կաթողիկոսի այրոռակալության տարիները: Դրանից հետո վանքը մի կարճ ժամանակ անայանում է, լքվում միաբաններից...»: Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, Բ-Գ, էջ 178:

նրա հարազատների, վերակացու հոգևորականի կամ աշխարհիկ մեկի, երբեմն էլ կառուցող վարպետի մասին: Հիշատակագրությունները հիմնականում եկեղեցու գլխավոր արձանագրության (փորագրված մեծ մասամբ արևմտյան գլխավոր մուտքի ձևկատակալ քարին) անբաժանելի մասն են, ըստ որոնց՝ առանձին խաչքարեր են կերտվել ու ագուցվել վիմագրում հիշատակված անձանց անուններով:

Միով բանիվ, ուշ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության քանդակային հարդարատարր հանդիսացող ագուցվող խաչքարերի քննվող տեսակն առանձնանում է հիմնականում հորինվածքային, գործառության ու հիշատակագրությունների յուրահատկությամբ, շնորհիվ որոնց՝ խաչքարային արվեստը շարունակել է նորովի ու ինքնատիպ դրսևորվել նաև 17-18-րդ դարերում:

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ վիմագրությունն ու ձեռագրագիտությունը: Երկու մենագրության և շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է: Հրատարակության է պատրաստում «Դիվան հայ վիմագրության» Արմավիրի մարզի պրակը, որտեղ վիմագրերի գերակշիռ մասը Հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատի վանքերից է:

Summary

17–18th CENTURIES KHACHKARS PLACED ON THE WALLS OF CHURCHES

Arrangement, functions, memorial inscription

Arsen E. Harutyunyan

Key words – Khachkar (cross stone), memorial inscription, church, arrangement, rosette, east, window, the front of altar bema, benefactor.

Khachkars (cross-stones) take a special place in a number of monuments of Medieval Armenia, about which numerous albums, researches and articles have been published. Our immediate reference is related to the khachkars placed on the walls of the churches dating from the 17–18th centuries and and created simultaneously with them. These khachkars have so far not been awarded any attention yet.

As shown by our research, the discussed khachkars are primarily distinguished by their compositional features. In particular, they are characterized by: simplicity of decorative ornaments, ornamental belt and cross in the form of braids, undecorated areas on the cross, the absence of a rosette at the base of the palmettes. The latter circumstance can be explained by the fact that the khachkars were usually built into the upper part of the church walls, and the

church itself took the role of the rosette in this case. Similarly, the placement of the khachkars above the window is explained, when the window replaces the rosette forming the compositional unity with the cross, and, being conditioned by the semantics of light, obviously symbolizes Christ and the «star-light» coming of the cross.

The examined cross-stones primarily decorate the eastern walls of the churches, which symbolizes the idea of the direction of the Second Coming of J. Christ. Similar khachkars were also built in the central part of the outer walls, above the main entrance, into the base of the altar, etc. Apparently, this is explained by the perception of the khachkar as an intermediary between the God and the believer.

Some memorable inscriptions are often placed on the built-in khachkars. The latter transmit documentary information about the creation of the building, the customer and his relatives, the caretaker of the church, and sometimes the master-builder of the church.

The examined type of late medieval khachkars is distinguished mainly by its compositional, functional and memorable features, thanks to which the art of creating khachkars found its new and original manifestation also in the 17th-18th centuries.

Резюме

ХАЧКАРЫ XVII–XVIII ВЕКОВ, ВСТРОЕННЫЕ В СТЕНЫ ЦЕРКВЕЙ

Композиция, назначение, памятная запись

Арсен Э. Арутюнян

Ключевые слова – хачкар (крест-камень), памятная запись, церковь, композиция, розетка, восток, окно, основание алтаря, заказчик.

В одном ряду с средневековыми армянскими монументальными памятниками особое место занимают хачкары (крест-камни), которым посвящены многие иллюстрированные издания, написаны монографии и статьи. Мы же обращаемся к стороне вопроса, до настоящего времени обделенного вниманием исследователей – хачкарам, встроенным в стены церквей XVII–XVIII веков и созданным одновременно с ними.

Как показало наше исследование, обсуждаемые хачкары прежде всего выделяются своими композиционными особенностями. В частности, для них характерны: простота декоративного убранства, орнаментальный пояс и крест в виде плетенки, свободные от орнамента междукрестия, отсутствие розетки в основании пальметт. Последнее обстоятельство можно объяснить тем, что хачкары обычно встраивались в верхнюю часть церковных стен, и в роли розетки в этом случае выступала сама церковь. Аналогично объясняется помещение хачкара над окном, когда составляющее композиционное единство с крестом окно заменяет розетку, и, будучи обусловленным се-

мантикой света, очевидно, символизирует Христа и «звездное-световое» пришествие креста.

Данными хачкарами украшены большей частью восточные стены церквей, в основе чего лежит идея востока как стороны второго пришествия Христа – солнца Правды. Подобные хачкары встраивались также в центральную часть наружных стен, над главным входом, в основание алтаря и пр. По всей видимости, это объясняется восприятием хачкара как посредника между Всевышним и верующим.

На встроенных хачкарах нередко помещены памятные надписи. Последние передают документальные сведения о времени создания постройке, заказчике и его родственниках, смотрителе церкви, а иногда и о мастере – строителе церкви.

Рассматриваемый тип позднесредневековых хачкаров выделяется главным образом своими композиционными, функциональными и памятными особенностями, благодаря которым искусство создания хачкаров нашло свое новое и самобытное проявление также в XVII–XVIII веках.